# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
## ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

0095, Ք.Երևան, Մ.Բաղրամյանպող., 19 Հեռ./ֆաքս՝ + 374 11 513 439


06.07.2020 թ.

«ԱՌԱՎՈՏ» ՕՐԱԹԵՐԹԻ ԼՐԱԳՐՈՂ
ՀՌԻՓՍԻՄԵ ՋԵԲԵՋՅԱՆԻՆ

Հարգելի Հռիփսիմե Ջեբեջյան

Ի պատասխան Ձեր 02.07.2020 թ. տեղեկատվություն ստանալու հարցման հայտնում ենք.

Ձեր կողմից պահանջված տեղեկատվության տրամադրումը ենթակա է քննարկման անձնական տվյալների պաշտպանության տեսանկյունից:

«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին տեղեկատվությունը կարող է տրամադրվել միայն տվյալ անձի համաձայնությամբ կամ օրենքով սահմանված դեպքերում:

Պատգամավորի վարձատրության մասին տեղեկությունը համարվում է մասնագիտական գործունեության բաղադրատարր, և դրան վերաբերող տեղեկությունները ևս գտնվում են մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի սկզբունքի պաշտպանության ներքո:

Վերոգրյալից ելնելով՝ հայտնում ենք, որ հրապարակման ենթակա լրացուցիչ տեղեկատվություն չունենք:

Հավելենք նաև, որ Ձեր կողմից նշված ժամանակահատվածում ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներից որևէ մեկը չի հրաժարվել իրեն հասանելիք պարգևավճարից:

Հարգանքով՝

ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԼԻԼԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ